

ՀՀ վճարային հաշվեկշիռը 2022 թվականի հունվար-դեկտեմբերին[1]

2022թ. հունվար-դեկտեմբերին ընթացիկ հաշվի պակասուրդը կազմել է 167.0 մլն ԱՄՆ դոլար (հետայսու՝ դոլար), 2021թ. հունվար-դեկտեմբերի 515.1 մլն դոլար պակասուրդի համեմատ նվազել է 348.1 մլն դոլարով (տես՝ հավելվածների թիվ 1 աղյուսակը): Ընթացիկ հաշիվ/ՀՆԱ հարաբերակցությունը 2022թ. հունվար-դեկտեմբերին կազմել է -0.9%՝ նախորդ տարվա հունվար-դեկտեմբերի -3. 7%-ի փոխարեն:

Գծապատկեր 1. *2007-2022թթ. ընթացիկ հաշիվ/ՀՆԱ (%) հարաբերակցության դինամիկան եռամսյակային բաշխմամբ[2]*



Գծապատկեր 2. *Ընթացիկ հաշվի բաղադրիչների կառուցվածքը 2011-2022թթ. հունվար-դեկտեմբեր ամիսների կտրվածքով*



Ընթացիկ հաշվի հիմնական մաս կազմող *ապրանքների բացասական հաշվեկշիռը* 2022թ. հունվար-դեկտեմբերին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 544.6 մլն դոլարով՝ 1504.8 մլն դոլարից դառնալով 2049.4 մլն դոլար:

[1] Նյութում օգտագործված են ՎՀՁ 6-ի սկզբունքներին համապատասխան կազմված վճարային հաշվեկշռի տվյալները:

[2] Շարքերի սեզոնային հարթեցումը կատարվել է Demetra+ ծրագրային փաթեթի X-12 ARIMA մեթոդի միջոցով:


Ապրանքների արտահանումը (կրեդիտ)[3] 2022 թվականի հունվար-դեկտեմբերին կազմել է 5521. 4 մլն դոլար՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճելով 68. 5%-ով[4], իսկ ***ներմուծումը (դեբետ)***[3] աճել է 58. 3 %-ով՝ կազմելով 7570. 8 մլն դոլար, արդյունքում ապրանքների գծով բացասական մնացորդը աճել է 544. 6 մլն դոլարով:

Ըստ ստացված տվյալների 2022թ. հունվար-դեկտեմբերին ***արտահանման*** կառուցվածքում[5] հիմնական ապրանքախմբերից աճ է արձանագրվել «**Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, մետաղներ և դրանցից իրեր**» (աճել է 3.0 անգամ կամ 663.0 մլն դոլարով՝ հիմնականում ադամանդե քարի, անմշակ ոսկու գծով), «**Մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ**» (աճել է 12.3 անգամ կամ 638.8 մլն դոլարով՝ հիմնականում հեռախոսային և հեռագրային ապարատ, մոդեմ, մասերի և հեռուստացույցի գծով), «**Վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ**» (աճել է 8.3 անգամ կամ 283.0 մլն դոլարով՝ հիմնականում մարդատար ավտոմոբենաների գծով), «**Պատրաստի սննդի արտադրանք**» (աճել է 40.4%-ով կամ 252.3 մլն դոլարով՝ հիմնականում սիգարետ և սիգարի գծով), «**Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր**» (աճել է 26.2%-ով կամ 95.3 մլն դոլարով՝ հիմնականում երկաթամիահալվածքի գծով), «**Սարքեր և ապարատներ**» (աճել է 3.2 անգամ կամ 80.6 մլն դոլարով՝ հիմնականում բժշկական, վիրաբուժական, ատամնաբուժական սարքերի գծով), **«Կենդանի կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք»** (աճել է 60.3%-ով կամ 64.5 մլն դոլարով՝ հիմնականում թարմ և սառեցված ձկան գծով):

Արտահանման կառուցվածքում հիմնական ապրանքախմբերի կազմում նվազում չի արձանագրվել:

Հարկ է նշել, որ 2021թ. հունվար-դեկտեմբեր ամիսների համեմատությամբ արտահանումն աճել է 77.7%-ով կամ 2344.1 մլն դոլարով (տես՝ հավելվածների թիվ 2 աղյուսակը):

Գծապատկեր 3. ***Հիմնական ապրանքախմբերի գծով արտահանման ծավալները 2014-2022թթ. հունվար-դեկտեմբեր ամիսներին*** *(մլն ԱՄՆ դոլար)*




[3] Ըստ վճարային հաշվեկշռի կազմման մեթոդաբանության, ապրանքների արտահանման կրեդիտում և ներմուծման դեբետում ներկայացված են արտահանումը և ներմուծումը ՖՕԲ գներով՝ ավելացրած ապրանքներ ձեռք բերված տրանսպորտային կայաններում և ոչ մոնետար ոսկի հոդվածներով գրանցված արտահանում/ներմուծումը:

[4] Այստեղ և հետայսու ապրանքների ու ծառայությունների համար աճի և հավելաճի տեմպերը հաշվարկված են ընթացիկ գներով, իսկ ֆինանսական ակտիվների համար՝ անվանական արժեքով:

[5] Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի (հետայսու ՀՀ ՎԿ) արտաքին առևտրի վիճակագրության տվյալների:

Ապրանքների արտահանման գործոնային վերլուծությունը ցույց է տալիս, որ արտահանման ծավալում նշանակալի տեսակարար կշիռ ունեցող ապրանքների գծով (որոնք կազմել են արտահանման 58.4%-ը) 2022թ. հունվար-դեկտեմբերին արձանագրվել է աճ, որը պայմանավորված է ինչպես միավորի միջին գնի, այնպես էլ ֆիզիկական ծավալի ավելացման հաշվին: Այսպես, հավելվածների թիվ 6 աղյուսակում բերված հիմնական ապրանքների գծով արձանագրվել է 870.6 մլն դոլարի բացարձակ աճ, ընդ որում, եթե միավորի միջին գնի ավելացման հաշվին աճը կազմել է 286.4 մլն դոլար, ապա ֆիզիկական ծավալի ավելացման հաշվին արտահանման ծավալների աճը կազմել է 584.2 մլն դոլար: Մասնավորապես, միավորի միջին գնի ավելացման հաշվին արտահանման ծավալների աճ է արձանագրվել անմշակ ոսկու (99.9 մլն դոլար), կոնյակի (49.0 մլն դոլար), երկաթամիահալվածքի (45.9 մլն դոլար), այլ կերպ պահածոյացված պտուղ, ընկույզ, հատապտուղի (34.2 մլն դոլար), սիգարետ և սիգարի (33.4 մլն դոլար), թանկարժեք մետաղի հանքաքար, խտանյութի (32.7 մլն դոլար), մոլիբդենի հանքաքար, խտանյութի (32.0 մլն դոլար), թարմ ձկան (23.7 մլն դոլար), իսկ ֆիզիկական ծավալի ավելացման արդյունքում արտահանման ծավալների աճ է գրանցվել ադամանդե քարի (325.1 մլն դոլար), անմշակ ոսկու (180.5 մլն դոլար), սիգարետ և սիգարի (47.6 մլն դոլար), թանկարժեք մետաղի հանքաքար, խտանյութի (37.3 մլն դոլար), երկաթամիահալվածքի (17.4 մլն դոլար), լոլիկի (9.4 մլն դոլար) գծով: Նույն ժամանակահատվածում միավորի միջին գնի նվազման արդյունքում արտահանման ծավալների անկում է գրանցվել պղինձի հանքաքար, խտանյութի (72.7 մլն դոլար), ադամանդե քարի (13.0 մլն դոլար), կանացի վերարկու, տաք կիսաբաճկոն, անձրևանոցի (10.5 մլն դոլար), լոլիկի (5.5 մլն դոլար), իսկ ֆիզիկական ծավալների նվազման արդյունքում՝ հիմնականում պղնձի հանքաքար, խտանյութի (33.7 մլն դոլար), սպիրտային թրմօղու (13.6 մլն դոլար), պանիր և կաթնաշոռի (5.9 մլն դոլար), ալյումինե փայլաթիթեղների (5.0 մլն դոլար):

Գծապատկեր 4. ***2022թ. հունվար-դեկտեմբերի 2021թ. հունվար-դեկտեմբերի համեմատ հիմնական ապրանքների գծով արտահանման ծավալների բացարծակ աճն ըստ գործոնների*** *(մլն ԱՄՆ դոլար)*




	Պղնձի խտանյութ	Սիգարետ	Անմշակ ոսկի	Երկաթամի ահալվածք	Ադամանդ	Կոնյակ
Ընդամենը	-106.3	81.0	280.4	63.3	312.1	51.2
Գնի հաշվին	-72.7	33.4	99.9	45.9	-13.0	49.0
Քանակի հաշվին	-33.7	47.6	180.5	17.4	325.1	2.3

Հարկ է նշել, որ 12 ամսվա արդյունքներով ուսումնասիրված ապրանքների գծով, որոնք ներկայացված են հավելվածների աղյուսակ 6-ում, արտահանման գների ընդհանուր մակարդակը նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ աճել է 10.1%-ով, իսկ ՀՀ ՎԿ կողմից հրապարակված տվյալներով ամբողջ արտահանման մասով նվազել է 4.1%-ով:

Ներմուծման[5] ծավալը 2022թ. հունվար-դեկտեմբերին նախորդ տարվա համեմատ աճել է 63.5%-ով կամ 3406.4 մլն դոլարով: Հարկ է նշել, որ 2022թ. հունվար-դեկտեմբերին ներմուծման ծավալների կառուցվածքում հիմնական ապրանքախմբերից աճ է արձանագրվել **«Մեքենաներ, սարքավորումներ և**

մեխանիզմներ» (աճել է 91.5%-ով կամ 822.5 մլն դոլարով՝ հիմնականում հեռախոսային և հեռագրային ապարատ, մոդեմ, մասերի, ավտոմատ հաշվիչ մեքենաներ, բլոկների և հեռուստացույցի գծով), **«Վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ»** (աճել է 3.2 անգամ կամ 659.7 մլն դոլարով՝ հիմնականում մարդատար ավտոմեքենաների գծով), **«Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, մետաղներ և դրանցից իրեր»** (աճել է 2.8 անգամ կամ 442.3 մլն դոլարով՝ հիմնականում ադամանդե քարի, անմշակ ոսկու գծով), **«Հանքահումքային մթերքներ»** (աճել է 27.6%-ով կամ 258.4 մլն դոլարով՝ հիմնականում նավթ և նավթամթերքի գծով), **«Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր»** (աճել է 59.6%-ով կամ 233.2 մլն դոլարով՝ հիմնականում այլ ձողեր երկաթից, ածխածնային պողպատից, չմշակված ալյումինի գծով), **«Պատրաստի սննդի արտադրանք»** (աճել է 33.3%-ով կամ 144.7 մլն դոլարով՝ հիմնականում կենդանիների կերի, կակաո պարունակող շոկոլադի գծով), **«Քիմիա և նրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանք»** (աճել է 28.7% կամ 130.9 մլն դոլարով՝ հիմնականում դեղամիջոցի, բաղկացած առանձին նյութերից գծով), **«Բուսական ծագման արտադրանք»** (աճել է 28.7% կամ 130.9 մլն դոլարով՝ հիմնականում ցորենի գծով):

Գծապատկեր 5. Հիմնական ապրանքախմբերի գծով ներմուծման ծավալները 2014-2022թթ. հունվար-դեկտեմբեր ամիսներին (մլն ԱՄՆ դոլար)




Հարկ է նշել, որ 2022թ. հունվար-դեկտեմբերի արդյունքներով, ներմուծման ծավալների կառուցվածքում հիմնական ապրանքախմբերից ոչ մեկի գծով ներմուծման ծավալների նվազում չի արձանագրվել:

Ներմուծման գործոնային վերլուծությունը ցույց է տալիս, որ 2022թ. հունվար-դեկտեմբեր ամիսներին նշանակալի տեսակարար կշիռ ունեցող ապրանքների գծով (որոնք կազմել են ներուծման 32.1%-ը) արձանագրվել է աճ, որը պայմանավորված է ինչպես միավորի միջին գնի, այնպես էլ ֆիզիկական ծավալի ավելացման հաշվին: Այսպես, հավելվածների թիվ 6 աղյուսակում բերված հիմնական ապրանքների գծով արձանագրվել է 942.6 մլն դոլարի բացարձակ աճ, ընդ որում, եթե միավոր գնի աճի հաշվին ներմուծման աճը

կազմել է 236.0 մլն դոլար, ապա ֆիզիկական ծավալի աճի հաշվին աճը կազմել է 706.6 մլն դոլար: Մասնավորապես, ֆիզիկական ծավալների ավելացման հաշվին աճ արձանագրվել է ադամանդե քարի (227.1 մլն դոլար), անմշակ ոսկու (190.3 մլն դոլար), բենզինի (139.0 մլն դոլար), հեռուստացույցի (53.1 մլն դոլար), իսկ միավորի միջին գնի ավելացման հաշվին աճ է գրանցվել դիզվառելիքի (86.1 մլն դոլար), կերոսինի (50.2 մլն դոլար), հեռուստացույցի (44.3 մլն դոլար), ադամանդե քարի (39.6 մլն դոլար), սառնարան, սառցարանի (36.2 մլն դոլար) գծով: Միաժամանակ տեղի է ունեցել նաև որոշ ապրանքների նշանակալի նվազում ի հաշիվ միջին գնի նվազման՝ բենզինի (107.9 մլն դոլար), անմշակ ոսկու (46.5 մլն դոլար), դեղամիջոց, բաղկացած առանձին նյութերից (18.3 մլն դոլար), իսկ ի հաշիվ ֆիզիկական ծավալների նվազման՝ սառնարան, սառցարանի (29.0 մլն դոլար), ծխախոտի հումք և մնացորդի (18.0 մլն դոլար), դիզվառելիքի (11.0 մլն դոլար) (տես՝ հավելվածների թիվ 6 աղյուսակը):

Գծապատկեր 6. ***2022թ. հունվար-դեկտեմբերի 2021թ. հունվար-դեկտեմբերի համեմատ հիմնական ապրանքների գծով ներմուծման ծավալների բացարձակ աճն ըստ գործոնների*** *(մլն ԱՄՆ դոլար)*



	Կերոսին	Բենզին	Ադամանդ	Ծխախոտի հումք	Հեռուստացույց	Դեղամիջոց	Անմշակ ոսկի	Սառնարան
ԸՆԴԱՄԵՆԸ	83.4	31.1	266.6	-15.9	97.3	14.1	143.8	7.2
Ի հաշիվ գնի	50.2	-107.9	39.6	2.2	44.3	-18.3	-46.5	36.2
Ի հաշիվ քանակի	33.2	139.0	227.1	-18.0	53.1	32.5	190.3	-29.0

Հարկ է նշել, որ 12 ամսվա արդյունքներով ուսումնասիրված ապրանքների գծով, որոնք ներկայացված են հավելվածների աղյուսակ 6-ում, ներմուծման գների ընդհանուր մակարդակը նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ աճել է 9.1%-ով, իսկ ՀՀ ՎԿ կողմից հրապարակված տվյալներով ամբողջ ներմուծման մասով՝ աճել 4.8%-ով:

Ուսումնասիրելով ներմուծման կառուցվածքը, 2018-2022թթ. հունվար-դեկտեմբեր ժամանակահատվածում, ըստ լայն տնտեսական դասակարգման (BEC), հարկ է նշել, որ ներմուծման կառուցվածքում առավել շատ աճի միտում են դրսևորվել «Տրանսպորտային սարքավորումներ», «Սպառման ապրանքներ» և «Մթերք և խմիչք» ապրանքային բաժինների գծով՝ համապատասխանաբար 24.8%, 21.0% և 16.5%: Ընդ որում հարկ է նշել, որ ուսումնասիրվող ժամանակահատվածում արտադրության կազմակերպման համար նախատեսվող ապրանքների (կապիտալ ապրանքների ու արտադրական պաշարների) գծով աճը կազմել է 11.1%, սպառման ապրանքների (մթերք և խմիչք ու սպառման ապրանքների) գծով՝ 19.2%: Միաժամանակ, այդ ընթացքում, եթե սպառման ապրանքների ու մթերք և խմիչքի տեսակարար կշիռն աճել է

4.1 տոկոսային կետով, ապա արտադրության կազմակերպման համար նախատեսվող ապրանքների տեսակարար կշիռը նվազել է 6.8 տոկոսային կետով:

<u>Աղյուսակ 1.</u> Ներմուծման կառուցվածքը 2018-2022թթ. հունվար-դեկտեմբեր ամիսներին ըստ լայն տնտեսական դասակարգման

	2018	2019	2020	2021	2022	2018-2022թթ միջին տարեկան հավելաճը,%
	մլն դոլար					
Մթերք և խմիչք	590.2	621.3	616.3	759.3	1086.3	**16.5%**
Արտադրական պաշարներ	1571.5	1624.3	1367.6	1619.4	2567.5	**13.1%**
Վառելիք և վառելանյութ	664.4	745.0	703.0	883.7	1130.4	**14.2%**
Կապիտալ ապրանքներ	905.2	835.1	838.6	857.1	1200.5	**7.3%**
Տրանսպորտային սարքավորումներ	417.9	815.2	276.3	375.0	1014.2	**24.8%**
Սպառման ապրանքներ	826.0	887.7	762.2	867.7	1769.9	**21.0%**
Ընդամենը	**4975.2**	**5528.7**	**4564.0**	**5362.2**	**8768.7**	**15.2%**
	տեսակարար կշիռը, %					
Մթերք և խմիչք	11.9	11.2	13.5	14.2	12.4	**X**
Արտադրական պաշարներ	31.6	29.4	30.0	30.2	29.3	**X**
Վառելիք և վառելանյութ	13.4	13.5	15.4	16.5	12.9	**X**
Կապիտալ ապրանքներ	18.2	15.1	18.4	16.0	13.7	**X**
Տրանսպորտային սարքավորումներ	8.4	14.7	6.1	7.0	11.6	**X**
Սպառման ապրանքներ	16.6	16.1	16.7	16.2	20.2	**X**
Ընդամենը	**100.0**	**100.0**	**100.0**	**100.0**	**100.0**	**X**

2022թ. հունվար-դեկտեմբեր ամիսներին ԵԱՏՄ անդամ երկրներ արտահանվող ապրանքների ծավալներն աճել են 2.8 անգամ կամ 1627.6 մլն դոլարով (հիմնականում Ռուսաստան՝ 1570.3 մլն դոլարով): Դեպի Եվրամիության երկրներ արտահանման աճ է արձանագրվել հիմնականում դեպի Բելգիա՝ 33.8 մլն դոլարով, Գերմանիա՝ 28.5 մլն դոլարով, Նիդերլանդներ՝ 23.6 մլն դոլարով, իսկ «Մնացած երկրներ» խմբից զգալիորեն աճել է արտահանումը դեպի ԱՄԷ՝ 459.7 մլն դոլարով, Վրաստան՝ 87.9 մլն դոլարով, Իրաք՝ 72.4 մլն դոլարով: Միաժամանակ կրճատվել է արտահանումը դեպի Շվեյցարիա՝ 104.9 մլն դոլարով, Հնդկաստան՝ 27.3 մլն, Չինաստան՝ 23.7 մլն դոլարով (տես՝ հավելվածների թիվ 4 աղյուսակը):

ԵԱՏՄ անդամ երկրներից ներմուծումը (ըստ ապրանքների ծագման երկրի հայտանիշի) աճել է 49.0%-ով կամ 906.3 մլն դոլարով, ընդ որում այն հիմնականում պայմանավորված է Ռուսաստանից՝ 837.1 մլն դոլար և Բելառուսից՝ 52.7 մլն դոլար ներմուծման աճով: Եվրամիության երկրներից ներմուծման ծավալներն աճել են 583.9 մլն դոլարով: ԵՄ երկրներից աճ է արձանագրվել հատկապես Գերմանիայից՝ 212.1 մլն դոլարով, Հունաստանից՝ 58.7 մլն դոլարով, Իտալիայից՝ 54.9 մլն դոլարով: «Մնացած երկրներ» խմբից ներմուծումն աճել է 1916.3 մլն դոլարով: Ներմուծման ծավալների աճ է արձանագրվել հիմնականում Չինաստանից՝ 520.7 մլն դոլարով, ԱՄՆ-ից՝ 260.9 մլն դոլարով, Թուրքիայից՝ 190.3 մլն դոլարով, Հնդկաստանից՝ 169.7 մլն դոլարով: Ներմուծման ծավալների նվազում է արձանագրվել Ուկրաինայից՝ 59.4 մլն դոլարով (41.4%-ով), (տես՝ հավելվածների թիվ 5 աղյուսակը):


<u>«Ծառայություններ»</u> հոդվածի գծով 2022 թվականի հունվար-դեկտեմբեր ամիսներին արտահանման ծավալները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել են 140. 7%-ով, իսկ ներմուծումը՝ 90 . 3%-ով, արդյունքում *«Ծառայություններ»* հոդվածի գծով արձանագրվել է 1630. 5 մլն դոլարի դրական

մնացորդ, նախորդ տարվա 396. 9 մլն դոլարի փոխարեն: Հարկ է նշել, որ ծառայությունների բնագավառում ծավալների հիմնական աճ արձանագրվել է «Ճանապարհորդություն» հոդվածի գծով (արտահանման 211. 0% աճ, ներմուծման՝ 178. 2%), որը պայմանավորված է Կովիդ-19 համաճարակի սահմանափակումների վերացման ներքո միջազգային զբոսաշրջության վերականգնմամբ, իսկ ծայությունների արտահանման գծով աճը մասամբ պայմանավորված է նաև ռուս-ուկրաինական հակամարտության պայմաններում դեպի ՀՀ միջազգային այցելությունների աճով (տես՝ հավելվածների Տեղեկանք. Ճանապարհորդության հոդվածի լրահաշվարկի մեթոդաբանություն): «Ճանապարհորդություն» հոդվածի գծով արտահանումը 2022թ. Հունվար-դեկտեմբերին կազմել է 2439. 1 մլն դոլար, որը 1654. 9 մլն դոլարով ավել է 2021թ. նույն ժամանակաշրջանի մնացորդից (784 . 2 մլն. դոլար), իսկ ճանապարհորդական ծառայությունների ներմուծման ծավալը կազմել է 1296. 6 մլն դոլար, որը 830. 5 մլն դոլարով ավել է 2021թ. նույն ժամանակաշրջանի մակարդակից (466. 1 մլն դոլար), արդյունքում «ճանապարհորդություն» հոդվածի գծով դրական մնացորդը կազմել է 1142. 5 մլն դոլար, որը 2021թ. Հունվար-դեկտեմբերի համեմատ աճել է 824. 4 մլն դոլարով:

Ծառայությունների հոդվածի գծով 2022թ. հունվար–դեկտեմբերին հիմնականում դրական մնացորդ է արձանագրվել «Հեռահաղորդակցության, համակարգչային և տեղեկատվական ծառայություն» (660. 3 մլն դոլար), «Ճանապարհորդություն» (1142. 5 մլն դոլար), «Շինարարություն» (73. 4 մլն դոլար) հոդվածների գծով (տես՝ հավելվածների թիվ 7 աղյուսակը):

Հարկ է նշել, որ 2022թ հունվար-դեկտեմբերին ճանապարհորդության և մարդատար տրանսպորտի մեջ զբոսաշրջության[6] հետ կապված ծառայությունների (զբոսաշրջային ծառայությունների) արտահանման ծավալը կազմել է 2464. 1 մլն դոլար (2021թ հունվար-դեկտեմբերին 802. 8 մլն դոլար) , իսկ ներմուծումը՝ 1270. 2 մլն դոլար (2021թ հունվար-դեկտեմբերին 458. 5 մլն դոլար), արդյունքում զբոսաշրջային ծառայությունների հաշվեկշիռը 2022թ. Հունվար-դեկտեմբերի արդյունքներով դրական է 1193. 9 մլն դոլարով 2021թ. Հոնվար-դեկտեմբերի 344. 4 մլն դոլարի դրական մնացորդի դիմաց: Հարկ է նշել, որ 10 տարվա կտրվածքով ներգնա զբոսաշրջային ծառայությունն ունեցել է դինամիկ աճ և 2011-2019թթ. հունվար-դեկտեմբերի արդյունքներով միջին հավելաճը կազմել է 9.5%, սակայն COVID-19 համաճարակով պայմանավորված դրական աճի միտումը նվազել է, ապա ռուս-ուկրաինական հակամարտության պատճառով՝ միջազգային այցելուների ներհոսքով պայմանավորված, աճել, որի արդյունքում դրական աճի միտումը վերջին 12 տարվա կտրվածքով կազմել է 11 . 3% :

Գծապատկեր 2. *Զբոսաշրջային ծառայությունների արտահանման ու ներմուծման ծավալների դինամիկան 2010-2022թթ. հունվար-դեկտեմբերին ամիսներին,* *մլն ԱՄՆ դոլար*



[6] «Զբոսաշրջային ծառայությունները», ի տարբերություն «Ճանապարհորդության», չի ներառում սեզոնային աշխատողների կողմից կատարված ճանապարհորդական ծախսերը(գիշերակաց, սնունդ, ներքին տրանսպորտ և այլ անձնական ծախսեր), սակայն ներառում է մարդատար տրանսպորտային ծառայությունները (առանց սեզոնային աշխատողների կողմից, միջազգային տրանսպորտի համար կատարված ծախսերի):

2022 թվականի հունվար-դեկտեմբերի ընթացքում ***«Սկզբնական եկամուտներ»*** հոդվածի գծով արձանագրվել է 848.6 մլն դոլարի բացասական մնացորդ, որը նախորդ տարվա համեմատ աճել է 108.8%-ով կամ 442.3 մլն դոլարով: Հարկ է նշել, որ սկզբնական եկամուտների կառուցվածքում «ներդրումային եկամուտներ» հոդվածի բացասական մնացորդը աճել է 442.2 մլն դոլարով, իսկ «աշխատողների վարձատրություն» հոդվածի դրական հաշվեկշիռը նվազել է 0.1 մլն դոլարով և կազմել է 319.4 մլն դոլար: Հունվար-դեկտեմբերի արդյունքներով «Սկզբնական եկամուտներ» հոդվածի՝ դեպի դուրս փոխանցումների մեջ (1497.5 մլն դոլար) զգալի է այլ ներդրումների գծով իրականացված տոկոսավճարները՝ 315.2 մլն դոլար: Դեպի դուրս փոխանցումների 236.3 մլն դոլարը կազմել են ոչ ռեզիդենտ «աշխատողների վարձատրությունը»[7], իսկ մնացած 945.9 մլն դոլարը ուղղակի ու պորտֆելային ներդրումների գծով վճարումներն են շահաբաժինների, վերաներդրված եկամտի ու տոկոսավճարների տեսքով:

Անձնական դրամական փոխանցումները[8] դեպի Հայաստանի Հանրապետություն 2022թ. հունվար-դեկտեմբերին կազմել են 2031.2 մլն դոլար՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել են 472. 0 մլն դոլարով: Սեզոնային աշխատողների կողմից ստացված զուտ աշխատավարձը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ աճել է 108.1 մլն դոլարով՝ կազմելով 417. 7 մլն դոլար, ինչ վերաբերում է ծառայություն մատուցող սեզոնային աշխատողների զուտ եկամուտներին, ապա նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ դրանք աճել են 21. 5 մլն դոլարով՝ կազմելով 83.3 մլն դոլար: Տնային տնտեսությունների անձնական տրանսֆերտների ներհոսքը աճել է 338.8 մլն դոլարով՝ կազմելով 1479.0 մլն դոլար 2021 թվականի նույն ժամանակահատվածի՝ 1140.2 մլն դոլարի դիմաց: Ինչ վերաբերում է մասնավոր հատվածի կապիտալ տրանսֆերտներին, ապա այս ժամանակահատվածում կապիտալ տրանսֆերտների ներհոսքը աճել է 3.6 մլն դոլարով և կազմել 51.1 մլն դոլար:

<u>Աղյուսակ 2.</u> Դրամական փոխանցումների ներհոսքի բաշխվածքն ըստ վճարային հաշվեկշռի հոդվածների[9]

մլն. ԱՄՆ դոլար

	2020 թ. հունվար-դեկտեմբեր	2021 թ. հունվար-դեկտեմբեր	2022 թ. հունվար-դեկտեմբեր
Դրամական փոխանցումներ դեպի ՀՀ	**1,311.7**	**1,559.2**	**2,031.2**
Աշխատողների զուտ աշխատավարձ	286.2	309.6	417.7
Աշխատողների աշխատավարձ	368.6	398.8	537.9
Որպես ծառայություն դասակարգված սեզոնային աշխատողների աշխատանքների դիմաց ստացված զուտ եկամուտներ	57.1	61.8	83.3
Որպես ծառայություն դասակարգված սեզոնային աշխատողների աշխատանքների դիմաց ստացված եկամուտներ	73.5	79.5	107.3
Անձնական տրանսֆերտներ	940.5	1,140.2	1,479.0
Կապիտալ տրանսֆերտներ	27.9	47.6	51.1

7 «Սկզբնական եկամուտներ» հոդվածի ոչ ռեզիդենտ աշխատողներին վճարված աշխատավարձի (դեբետ) գծով իրականացվել է լրահաշվարկ՝ հիմք ընդունելով ոչ ռեզիդենտ աշխատողների թվաքանակի աննախադեպ աճը 2022 թվականի ընթացքում:

8 Ըստ վճարային հաշվեկշռի մեթոդաբանության դրամական փոխանցումներն իրենցից ներկայացնում են աշխատողների զուտ վարձատրությունը և տնային տնտեսությունների միջև դրամական և բնեղեն արտահայտությամբ տրանսֆերտները՝ ինչպես ընթացիկ, այնպես էլ կապիտալ:

9 Կապված դրամական փոխանցումների շարքի վերանայման հետ՝ 2011 թվականից աշխատողների աշխատավարձի մի մասը արտացոլվում է ծառայություններ հոդվածում:


«Երկրորդային եկամուտներ» հոդվածի գծով զուտ ստացումները աճել են 10. 1%-ով և կազմել են 1100. 5 մլն դոլար, ընդ որում ստացումները կազմել են 1829.6 մլն դոլար, իսկ դեպի դուրս փոխանցումները՝ 729. 1 մլն դոլար: Հարկ է նշել, որ 2022թ. հունվար-դեկտեմբերի արդյունքներով Պետական հատվածի ընթացիկ տրանսֆերտների զուտ արտահոսքը կազմել է 71.6 մլն դոլար, 2021թ. նույն ժամանակաշրջանի 75.5 մլն դոլար զուտ ներհոսքի դիմաց: Մասնավոր հատվածի ընթացիկ տրանսֆերտների զուտ ներհոսքը այդ ընթացքում կազմել են 1172. 0 մլն դոլար 2021թ նույն ժամանակաշրջանի 923. 6 մլն դոլարի դիմաց:

Կապիտալի հաշվի զուտ ներհոսքը 2022թ. հունվար-դեկտեմբերին կազմել է 70. 5 մլն դոլար, նախորդ տարվա 50. 1 մլն դոլարի դիմաց, ընդ որում պետական կառավարման համակարգով ստացվել է 11. 2 մլն դոլարի կապիտալ տրանսֆերտներ, իսկ մասնավոր հատվածով՝ 65. 8 մլն դոլարի:

<u>Ֆինանսական հաշվի</u> զուտ վարկավորումը արտաքին աշխարհին 2022թ. հունվար-դեկտեմբերին կազմել է 514. 3 մլն դոլար՝ նախորդ տարվա հունվար-դեկտեմբերի 371. 6 մլն դոլարի արտաքին աշխարհից զուտ փոխառության դիմաց:

Ուղղակի ներդրումների գծով պարտավորությունների զուտ ստանձնումը 2022թ. հունվար-դեկտեմբերի ընթացքում կազմել է 998.1 մլն դոլար նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 366.4 մլն դոլարի փոխարեն, ընդ որում զուտ ներհոսքի 326.8 մլն դոլարը իրականացվել է բաժնետիրական կապիտալում, 585.3 մլն դոլարը՝ վերաներդրված եկամտի գծով, իսկ 86.0 մլն դոլարը՝ պարտքային գործիքների գծով: Այդ ընթացքում ուղղակի ներդրումների գծով զուտ ակտիվներն աճել են 49. 7 մլն դոլարով, նախորդ տարվա նույն ժամանակահատվածում 24. 6 մլն դոլարի համեմատ:

<u>Գծապատկեր 7.</u> ***Ուղղակի ներդրումների գծով զուտ հոսքերը 2013-2022թթ.-ին, ըստ գործիքների*** *(մլն ԱՄՆ դոլար)*



2022 թվականի հունվար-դեկտեմբերի ընթացքում պորտֆելային ներդրումների ակտիվների գծով տեղի է ունեցել 1031. 6 մլն դոլարի ձեռքբերումներ, նախորդ տարվա 53. 8 մլն դոլարի փոխարեն, իսկ պարտավորությունների զուտ մարումը կազմել է 324. 4 մլն դոլար նախորդ տարվա հունվար-դեկտեմբերի 725. 8 մլն դոլարի զուտ ստանձնումների փոխարեն:

Այլ ներդրումների գծով 2022 թվականի հունվար-դեկտեմբերին տեղի է ունեցել 1057. 0 մլն դոլարի ֆինանսական ակտիվների զուտ ձեռքբերում, իսկ զուտ ֆինանսական պարտավորություններն այդ ընթացքում աճել են 1880. 2 մլն դոլարով: Հարկ է նշել, որ եթե ակտիվների զուտ ավելացումը տեղի է ունեցել


հիմնականում դրամական միջոցների ու ավանդների (925. 0 մլն դոլար), առևտրային վարկերի և կանխավճարների (84. 2 մլն դոլար) հաշվին, ապա պարտավորությունների զուտ աճը հիմնականում պայմանավորված է ավանդների աճով (1773. 9 մլն դոլար):

Հարկ է նշել, որ 2022 թվականի հունվար-դեկտեմբերին իրական և ֆինանսական հատվածներում օտարերկրյա ընդամենը ներդրումների ***զուտ հոսքերը***[10] կազմել են 2578.8 մլն դոլար, որից՝ իրական հատվածում՝ 473.4 մլն դոլար, իսկ ֆինանսական հատվածում՝ 2105. 4 մլն դոլար: 2022թ. դեկտեմբերի վերջին այդ հատվածներով իրականացված ներդրումների ընդհանուր ծավալը (կուտակային պաշարները) կազմել է 13950. 5 մլն դոլար, որից՝ իրական հատվածում 6671. 9 մլն. դոլար, իսկ ֆինանսական հատվածում՝ 7278.6 մլն դոլար: Օտարերկրյա ուղղակի ներդրումների զուտ հոսքերը ուսումնասիրվող ժամանակահատվածում կազմել են 998. 1 մլն դոլար, որից՝ իրական հատվածում 429. 1 մլն դոլար, իսկ ֆինանսական հատվածում՝ 569. 0 մլն դոլար: Արդյունքում, օտարերկրյա ուղղակի ներդրումների ընդհանուր ծավալը 2022թ. դեկտեմբերի վերջին կազմել է 7123. 8 մլն դոլար, որից՝ իրական հատվածում՝ 4778. 6 մլն դոլար, իսկ ֆինանսական հատվածում՝ 2345.2 մլն դոլար: Հարկ է նշել, որ ընդամենը ներդրումների կուտակային պաշարների 51. 6% և ուղղակի ներդրումների 32. 7%-ը իրականացվել է «Ֆինանսական միջնորդություն, բացի ապահովագրությունից և կենսաթոշակային ապահովությունից» (գլխավորապես բանկային համակարգ), համապատասխանաբար՝ 15. 6%-ը և 17. 3%-ը՝ «Էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարման», 2.6%-ը և 5. 1%-ը՝ «Հանքագործական արդյունաբերության հարակից գործունեություն», 7. 2%-ը և 10. 1%-ը՝ «Մետաղական հանքաքարի արդյունահանում» ոլորտներում (տես՝ հավելվածների թիվ 10 աղյուսակը):

Ուսումնասիրելով զուտ օտարերկրյա ուղղակի ներդրումների դինամիկան վերջին տարիներին, հարկ է նշել, որ ներդրումներն իրականացվել են գլխավորապես 3 հիմնական ոլորտներում՝ «Ֆինանսական միջնորդություն», «Էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարման» և «Հանքագործական արդյունաբերության հարակից գործունեություն»: Մասնավորապես, սկսած 2016 թ-ից տնտեսությունում իրականացվել է 2335.1 մլն դոլարի զուտ օտարերկրյա ուղղակի ներդրումներ, որի 82. 1% կամ 1916. 0 մլն դոլարը վերը նշված ոլորտներում, ընդ որում հեռահաղորդակցության ոլորտում, որը նախկինում հիմնական ներդրումներ իրականացվող ոլորտն էր, նշված տարիներին ուղղակի ներդրումները մարումների տեսքով նվազել են 188. 5 մլն դոլարով:

[10] Զուտ հոսքերը հաշվետու ժամանակահատվածում օտարերկրյա ներդրումների գծով ստացումների և մարումների տարբերություններն են:

<u>Գծապատկեր 8.</u> ***Օտարերկրյա ուղղակի ներդրումների ծավալը 2016-2022թթ., ըստ հիմնական տնտեսության գործունեության ոլորտների*** (մլն ԱՄՆ դոլար)



Ուսումնասիրելով ընդամենը ներդրումների զուտ ներհոսքի աշխարհագրական բաշխվածությունը 2022թ. հունվար-դեկտեմբեր ամիսներին, հարկ է նշել, որ հիմնականում դրական ներհոսք է արձանագրվել Շվեյցարիայի (289.6 մլն դոլար), Բրիտանական Վիրջինյան կղզիների (195.1 մլն դոլար), Ռուսաստանի (337.4 մլն դոլար), Կիպրոսի (140.2 մլն դոլար) կողմից, իսկ զուտ նվազումներ՝ միջազգային կազմակերպությունների (69. 1 մլն դոլար), Նիդերլանդների (242. 9 մլն դոլար), Միացյալ Թագավորության (167. 8 մլն դոլար) կողմից: Ինչ վերաբերում է օտարերկրյա ուղղակի ներդրումներին, ապա հարկ է նշել, որ հունվար-դեկտեմբեր զուտ դրական ներհոսքը կազմել է 998. 1 մլն դոլար, որը հիմնական իրականացվել են Շվեցարիայից (282. 4 մլն դոլար), Ռուսաստանից (242. 0 մլն դոլար), Բրիտանական Վիրջինյան կղզիների (198.6 մլն դոլար) և Կիպրոսից (138. 7 մլն դոլար), իսկ զուտ նվազում է արձանագրվել հիմնականում Միացյալ Թագավորության (180. 7 մլն դոլար) և Նիդերլանդներից (37. 9 մլն դոլար): Նշենք նաև, որ պաշարների մասով 2022թ. դեկտեմբերի վերջին իրական ու ֆինանսական հատվածներում իրականացված ընդամենը ներդրումների 21. 1%-ը և ուղղակի ներդրումների 31. 4%-ը իրականացվել է Ռուսաստանի Դաշնության ռեզիդենտ սուբյեկտների կողմից (2938. 4 մլն դոլար ընդամենը ներդրումներ և 2236. 1 մլն դոլար ուղղակի ներդրումներ), համապատասխանաբար 6. 6%-ը և 11. 7%-ը՝ Կիպրոսի, 6. 2%-ը և 3. 7%-ը՝ Լյուքսեմբուրգի, 3.7%-ը և 5. 5%-ը՝ Միացյալ Թագավորության, 5.3%-ը և 1.9%-ը՝ Միջազգային կազմակերպությունների կողմից (տես՝ հավելվածների աղյուսակ 9):

2022 թվականի հունվար-դեկտեմբերին պահուստային ակտիվները աճել են 936. 6 մլն դոլարով, նախորդ տարվա հունվար-դեկտեմբերի 689. 5 մլն դոլարի համեմատ:

ՀՀ համախառն արտաքին պարտք

ՀՀ համախառն արտաքին պարտքը 2022թ. դեկտեմբերի վերջի դրությամբ կազմել է 15257. 9 մլն դոլար, որի 43. 3%-ը կամ 6609.9 մլն դոլարը ՀՀ կառավարության և ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտքն է (արտաքին պետական պարտք), 34. 7%-ը կամ 5300. 1 մլն դոլարը՝ ավանդային կազմակերպությունների (բացի ՀՀ կենտրոնական բանկից) պարտքը (ներառյալ միջֆիրմային վարկերը), իսկ 21. 9%-ը կամ 3347. 9 մլն դոլարը՝ այլ մասնավոր հատվածի պարտքը (ներառյալ միջֆիրմային վարկերը):

ՀՀ կառավարության և կենտրոնական բանկի կողմից ստացված արտաքին վարկերը[11] 2022 թվականի դեկտեմբերի վերջի դրությամբ կազմել են 5055.2 մլն դոլար, որից 4503.9 մլն դոլարը ՀՀ կառավարությանը տրված վարկերն են, իսկ 551.3 մլն դոլարը՝ ՀՀ կենտրոնական բանկին (տես աղյուսակ 13): 2022 թվականի չորրորդ եռամսյակի ընթացքում արտաքին պետական վարկերի գծով ներհոսքը կազմել է 279.6 մլն դոլար, որի 50%-ը՝ 139. 9 մլն դոլարը, բազմակողմանի պաշտոնական աղբյուրներից ներգրավված միջոցներն են: Երկկողմանի պայմանագրերով ստացված միջոցները կազմել են 139. 7 մլն դոլար:


2022 թվականի չորրորդ եռամյակի ընթացքում արտաքին պետական վարկերի հիմնական գումարի գծով մարումները կազմել են 95. 8 մլն դոլար, իսկ տոկոսավճարները՝ 40 մլն դոլար:

Հարկ է նշել, որ ոչ ռեզիդենտների կողմից ձեռք բերված արտարժութային պետական պարտատոմսերի (եվրոբոնդեր) ծավալը 2022 թ. դեկտեմբերի վերջի դրությամբ կազմում է 1,103. 4 մլն դոլար:


ՀՀ ավանդային կազմակերպությունների (բացի ՀՀ կենտրոնական բանկից) համախառն արտաքին պարտքը (ներառյալ միջֆիրմային վարկերը) 2022թ. դեկտեմբերի վերջին 2021թ.-ի դեկտեմբերի վերջի համեմատ աճել է 1663. 1 մլն դոլարով և կազմել 5300. 1 մլն դոլար: 2022 թվականի դեկտեմբերի վերջին ավանդային կազմակերպությունների հիմնական վարկատու երկրներն են եղել Նիդերլանդները՝ 19.8%, Լյուքսեմբուրգը՝ 28.9% և Ֆրանսիան՝ 8.2%: Վարկերի մոտ 18.0%-ը ստացվել է միջազգային կազմակերպություններից: ՀՀ այլ մասնավոր հատվածի համախառն արտաքին պարտքը (ներառյալ միջֆիրմային վարկերը) աճել է 132. 9 մլն դոլարով և կազմել 3347. 9 մլն դոլար: Պարտքի 49. 3%-ը կամ 1650 . 3 մլն դոլարը կազմում են ներգրավված վարկերը, 41. 4%-ը կամ 1386. 5 մլն դոլարը՝ միջֆիրմային վարկերը, իսկ մնացած 311. 1 մլն դոլարը՝ այլ պարտավորությունները՝ ներառյալ առևտրային վարկերը:

[11] Ըստ ՀՀ ֆինանսների նախարարության տվյալների

Գծապատկեր 9. ***ՀՀ համախառն արտաքին պարտքի կառուցվածքն ըստ գործիքների և վարկառուների 2022թ. դեկտեմբերի վերջի դրությամբ*** (մլն ԱՄՆ դոլար)



Գծապատկեր 10. ***ՀՀ համախառն արտաքին պարտքի կառուցվածքն ըստ հատվածների ժամանակաշրջանի վերջի դրությամբ*** (մլն ԱՄՆ դոլար)



ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Աղյուսակ 1. ՀՀ վճարային հաշվեկշիռ[12]

մլն ԱՄՆ դոլար

	2018	*2019*	*2020*	*2021*	*2022*	*Հավելաճի փեմպը 2021թ.-ի նկատմամբ,%*
ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇԻՎ	-924.3	-997.0	-477.8	-515.1	-167.0	-67.6
Կրեդիտ	6836.7	7774.7	5631.2	6949.5	12177.0	75.2
Դեբետ	7761.0	8771.7	6109.0	7464.6	12344.0	65.4
ԱՊՐԱՆՔՆԵՐ և ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	-1752.7	-1809.0	-1264.1	-1107.9	-418.9	-62.2
Կրեդիտ	4927.0	5794.4	3818.2	5011.9	9698.5	93.5
Դեբետ	6679.8	7603.4	5082.3	6119.7	10117.5	65.3
ԱՊՐԱՆՔՆԵՐ	-1763.4	-1722.1	-1382.2	-1504.8	-2049.4	36.2
Կրեդիտ	2724.7	3360.7	2718.8	3276.6	5521.4	68.5
Դեբետ	4488.1	5082.8	4101.0	4781.4	7570.8	58.3
Ապրանքների առևտուրն ըստ վճարային հաշվեկշռի հիմքի	-1852.7	-1831.5	-1613.7	-1548.5	-2229.8	44.0
Կրեդիտ	2547.8	3136.8	2463.1	3142.8	5107.2	62.5
Դեբետ	4400.6	4968.2	4076.8	4691.4	7337.0	56.4
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	10.7	-86.9	118.0	396.9	1630.5	4.1 անգամ
Կրեդիտ	2202.3	2433.7	1099.3	1735.2	4177.1	2.4 անգամ
Դեբետ	2191.6	2520.6	981.3	1338.3	2546.7	90.3
Տրանսպորտ	-299.4	-373.0	-181.6	-205.4	-209.1	1.8
Կրեդիտ	256.3	275.4	232.4	304.4	559.0	83.6
Դեբետ	555.7	648.4	413.9	509.9	768.1	50.6
Ճանապարհորդություն	47.3	39.3	9.1	318.1	1142.5	3.6 անգամ
Կրեդիտ	1329.0	1528.0	287.3	784.2	2439.1	3.1 անգամ
Դեբետ	1281.7	1488.7	278.2	466.1	1296.6	2.8 անգամ
Շինարարություն	143.1	140.5	60.7	42.6	73.4	72.3
Կրեդիտ	191.1	178.1	77.7	86.1	104.2	21.0
Դեբետ	48.0	37.7	17.0	43.5	30.8	-29.2
Հեռահաղորդակցության, համակարգչային և տեղեկատվական ծառայություններ	196.8	220.0	295.0	338.8	660.3	94.9
Կրեդիտ	235.8	261.7	328.5	382.4	711.4	86.0
Դեբետ	38.9	41.7	33.5	43.6	51.0	17.1
Այլ	-70.8	-62.2	-53.6	-75.2	-82.5	9.6
Կրեդիտ	45.9	43.2	42.4	36.2	63.9	76.7
Դեբետ	116.7	105.4	96.0	111.4	146.4	31.4
ճանապարհորդության և մարդատար փրանսպորտի մեջ զբոսաշրջության հետ կապված ծառայություններ	112.4	101.3	34.1	344.4	1193.9	3.5 անգամ
Կրեդիտ	1340.6	1534.9	286.9	802.8	2464.1	3.1 անգամ


[12] 2022 թվականին ճշգրտումներ են իրականացվել 2015-2021 թվականների վճարային հաշվեկշռի որոշ հոդվածներում, պայմանավորված հավաքագրվող տվյալների ճշգրտումներով և ամփոփման մեթոդաբանական վերանայումներով: Միևնույն ժամանակ, 2022 թվականին վերանայվել է ավտոմեքենաների արտահանման ցուցանիշը, մասնավորապես ՀՀ կենտրոնական բանկը տարատեսակ ուսումնասիրությունների ու քննարկումների արդյունքում իրականացրել է 2021 թվականի և 2022 թվականի 1-ին կիսամյակի համար դեպի ԵԱՏՄ երկրներ ավտոմեքենաների արտահանման լրահաշվարկ:

	2018	2019	2020	2021	2022	Հավելաճի տեմպը 2021թ.-ի նկատմամբ,%
Դեբետ	1228.2	1433.6	252.8	458.5	1270.2	2.8 անգամ
ՍԿԶԲՆԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	200.3	179.7	-196.3	-406.4	-848.6	2.1 անգամ
Կրեդիտ	910.1	939.1	460.1	479.9	648.8	35.2
Դեբետ	709.7	759.4	656.4	886.2	1497.5	69.0
Աշխատողների վարձատրություն	656.8	675.4	286.4	319.5	319.4	0.0
Կրեդիտ	822.3	845.9	386.5	416.6	555.8	33.4
Դեբետ	165.5	170.4	100.1	97.0	236.3	2.4 անգամ
Ներդրումային եկամուտներ	-456.4	-495.7	-482.6	-725.9	-1168.1	60.9
Կրեդիտ	87.8	93.2	73.7	63.3	93.1	47.0
Դեբետ	544.2	588.9	556.3	789.2	1261.1	59.8
Ուղղակի ներդրումներից	-169.3	-226.5	-225.0	-450.5	-827.0	83.6
Կրեդիտ	8.3	11.3	6.3	7.5	7.0	-6.4
Դեբետ	177.6	237.8	231.4	458.0	834.0	82.1
Պորտֆելային ներդրումներից	-40.4	-19.4	-20.5	-59.7	-89.4	49.7
Կրեդիտ	24.1	27.6	26.6	16.6	21.2	27.7
Դեբետ	64.5	47.0	47.1	76.3	110.6	44.9
Այլ ներդրումներից	-246.7	-249.8	-237.1	-215.7	-251.7	16.7
Կրեդիտ	55.4	54.3	40.7	39.2	64.8	65.4
Դեբետ	302.1	304.2	277.8	254.9	316.6	24.2
ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	628.1	632.3	982.5	999.1	1100.5	10.1
Կրեդիտ	999.6	1041.2	1352.9	1457.7	1829.6	25.5
Դեբետ	371.5	408.9	370.3	458.6	729.1	59.0
Պետական կառավարում	144.6	145.2	222.8	75.5	-71.6	-
Կրեդիտ	263.7	283.4	350.8	234.6	233.7	-0.4
Դեբետ	119.1	138.2	128.1	159.1	305.3	91.9
Ֆինանսական կազմակերպություններ, ոչ ֆինանսական կազմակերպություն-ներ, տնային տնտեսություններ և ՏՍՈՒԱԿ	483.5	487.1	759.8	923.6	1172.0	26.9
Կրեդիտ	735.9	757.8	1002.0	1223.1	1595.9	30.5
Դեբետ	252.4	270.7	242.2	299.5	423.8	41.5
ԿԱՊԻՏԱԼԻ ՀԱՇԻՎ	70.6	54.5	45.4	50.1	70.5	40.6
Կրեդիտ	80.4	65.5	51.3	61.6	77.0	25.0
Դեբետ	9.8	11.0	6.0	11.4	6.5	-43.6
Պետական կառավարում	37.1	23.9	17.0	9.0	11.2	23.8
կրեդիտ	37.1	23.9	17.0	9.0	11.2	23.8
դեբետ	0.0	0.0	0.0	0.0	0.0	-
Ֆինանսական կազմակերպություններ, ոչ ֆինանսական կազմակերպություն-ներ, տնային տնտեսություններ և ՏՍՈՒԱԿ	33.5	30.6	28.4	41.1	59.4	44.3
կրեդիտ	43.3	41.6	34.4	52.6	65.8	25.2
դեբետ	9.8	11.0	6.0	11.4	6.5	-43.6
Զուտ վարկավորում (+)/ զուտ փոխառություն (-) ընթացիկ և կապիտալ հաշիվներից	-853.8	-942.5	-432.5	-465.0	-96.5	-79.2
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇԻՎ	-689.8	-463.0	-682.8	-371.6	514.3	-
Զուտ վարկավորում(+) զուտ փոխառություն (-) ֆինանսական հաշվից	-689.8	-463.0	-682.8	-371.6	514.3	-
ՈՒղղակի ներդրումներ	-259.8	-233.3	-85.9	-341.9	-948.3	2.8 անգամ

	2018	2019	2020	2021	2022	Հավելաճի տեմպը 2021թ.-ի նկատմամբ,%
Զուտ ֆինանսական ակտիվների ձեռքբերում	7.0	-133.0	-27.3	24.6	49.7	2. 0 անգամ
Զուտ պարտավորությունների ստանձնում	266.9	100.3	58.6	366.4	998.1	2.7 անգամ
Պորտֆելային ներդրումներ	39.9	-28.9	43.7	-672.0	1356.0	-
Զուտ ֆինանսական ակտիվների ձեռքբերում	21.1	74.2	37.6	53.8	1031.6	19.2 անգամ
Զուտ պարտավորությունների ստանձնում	-18.9	103.0	-6.1	725.8	-324.4	-
Ֆինանսական ածանցյալներ (բացառությամբ պահուստների) և աշխատողների ֆոնդային օպցիոններ	0.6	-1.4	-0.2	6.9	-6.7	-
Այլ ներդրումներ	-434.0	-791.3	-362.8	-54.2	-823.3	15.2 անգամ
Զուտ ֆինանսական ակտիվների ձեռքբերում	139.2	350.4	11.9	21.7	1057.0	48.7 անգամ
Զուտ պարտավորությունների ստանձնում	573.2	1141.7	374.7	75.9	1880.2	24.8 անգամ
Այլ կապիտալ	2.0	1.7	1.6	-0.2	6.7	-
Զուտ ֆինանսական ակտիվների ձեռքբերում	2.0	1.7	1.6	-0.2	6.7	-
Զուտ պարտավորությունների ստանձնում	0.0	0.0	0.0	0.0	0.0	-
Դրամական միջոցներ և ավանդներ	-305.7	-493.4	488.1	215.7	-848.9	-
Զուտ ֆինանսական ակտիվների ձեռքբերում	67.0	213.9	206.8	95.4	925.0	9.7 անգամ
Զուտ պարտավորությունների ստանձնում	372.8	707.3	-281.3	-120.3	1773.9	-
Վարկեր	-71.1	-423.9	-707.3	-58.0	-81.2	39.9
Զուտ ֆինանսական ակտիվների ձեռքբերում	79.9	31.0	-129.3	-89.4	31.8	-
Զուտ պարտավորությունների ստանձնում	150.9	454.9	578.0	-31.3	113.0	-
Ապահովագրական, կենսաթոշակային և սպանդարտացված ծրագրեր	0.0	4.3	-4.9	-4.2	1.8	-
Զուտ ֆինանսական ակտիվների ձեռքբերում	1.2	6.6	-2.3	-0.8	4.8	-
Զուտ պարտավորությունների ստանձնում	1.1	2.3	2.6	3.4	3.0	-12.8
Առևտրային վարկեր և կանխավճարներ	-15.4	106.2	-103.7	-29.0	64.6	-
Զուտ ֆինանսական ակտիվների ձեռքբերում	-2.2	90.5	-60.4	12.8	84.2	6.6 անգամ
Զուտ պարտավորությունների ստանձնում	13.2	-15.6	43.3	41.7	19.6	-53.0
Այլ հաշիվներ սպացվող/վճարվող	-43.8	13.8	-36.6	-3.2	35.0	-
Զուտ ֆինանսական ակտիվների ձեռքբերում	-8.7	6.7	-4.4	3.8	4.5	20.2
Զուտ պարտավորությունների ստանձնում	35.1	-7.1	32.3	7.0	-30.5	-
ՀՓԻ (պարտավորությունների զուտ սպանձնում)	0.1	-0.1	-0.1	175.4	1.3	-99.3
Պահուստային ակտիվներ	-36.4	591.9	-277.6	689.5	936.6	35.8
Զուտ սխալներ և բացթողումներ	164.0	479.5	-250.3	93.3	610.8	6.5 անգամ

Գծապատկեր 1. Արտահանման, ներմուծման և ապրանքային հաշվեկշռի դինամիկան (ըստ վճարային հաշվեկշռի մեթոդաբանության)

մլն. ԱՄՆ դոլար



Աղյուսակ 2. ՀՀ արտահանման ապրանքային կառուցվածքը[13] *(ըստ ԱՏԳԱԱ ապրանքախմբերի)*

մլն. ԱՄՆ դոլար

	2018	*2019*	*2020*	*2021*	*2022*	**2022թ. հավելաճի տեմպը 2021թ. նկատմամբ, %**
Կենդանի կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք	50.6	51.2	78.3	107.0	171.6	60.3
Բուսական ծագման արտադրանք	93.4	106.4	136.2	186.8	225.4	20.7
Կենդանական և բուսական ծագման յուղեր և ճարպեր	0.1	0.1	0.1	0.1	7.5	95.7 անգամ
Պատրաստի սննդի արտադրանք	552.9	641.8	562.9	624.9	877.2	40.4
Հանքահումքային արտադրանք	644.7	742.9	814.7	982.2	1022.0	4.1
Քիմիայի և դրա հետ կապված արդյունա-բերության ճյուղերի արտադրանք	28.7	30.7	29.6	41.4	82.8	2.0 անգամ
Պլաստմասսա և դրանցից իրեր, կաուչուկ և ռետինե իրեր	14.3	13.6	15.6	19.8	62.5	3.2 անգամ
Կաշվե հումք, կաշի, մորթի և դրանցից իրեր	13.7	8.7	5.2	5.9	11.1	89.1
Փայտ և փայտյա իրեր	1.9	1.1	0.6	1.1	4.7	4.2 անգամ
Թուղթ և թղթից իրեր	1.4	1.4	1.3	1.7	6.7	4.0 անգամ
Մանածագործական իրեր	225.3	169.1	133.5	183.5	212.4	15.7
Կոշկեղեն, գլխարկեղեն, հովանոցներ	4.5	2.6	3.0	4.7	12.6	2.7 անգամ
Իրեր քարից, գիպսից, ցեմենտից	24.2	15.9	20.1	20.3	37.1	82.9
Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, մետաղներ և դրանցից իրեր	307.4	414.8	369.2	326.3	989.3	3.0 անգամ

[13] Ըստ ՀՀ ՎԿ արտաքին առևտրի վիճակագրության տվյալների

	2018	*2019*	*2020*	*2021*	*2022*	**2022թ. հավելաճի տեմպը 2021թ. նկատմամբ, %**
Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր	296.6	261.1	229.2	364.5	459.8	26.2
Մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ	43.6	44.5	42.3	56.7	695.5	12.3 անգամ
Վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ	26.3	31.4	14.1	38.7	321.7	8.3 անգամ
Սարքեր և ապարատներ	52.8	96.1	61.7	36.1	116.6	3.2 անգամ
Տարբեր արդյունաբերական ապրանքներ	29.7	13.2	18.8	13.3	40.1	3.0 անգամ
Արվեստի ստեղծագործություններ	0.7	0.5	0.6	1.0	3.3	3.4 անգամ
ԸՆԴԱՄԵՆԸ	**2412.8**	**2647.2**	**2537.0**	**3016.0**	**5360.1**	**77.7**

Աղյուսակ 3. ՀՀ ներմուծման ապրանքային կառուցվածքը[13] *(ըստ ԱՏԳԱԱ ապրանքախմբերի)*

մլն. ԱՄՆ դոլար

	2018	*2019*	*2020*	*2021*	*2022*	**2022 թ. հավելաճի տեմպը 2021թ. նկատմամբ,%**
Կենդանի կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք	131.9	149.3	131.6	167.0	260.3	55.9
Բուսական ծագման արտադրանք	218.3	232.2	255.8	290.5	421.3	45.1
Կենդանական և բուսական ծագման յուղեր և ճարպեր	55.1	51.2	52.6	72.4	105.6	45.7
Պատրաստի սննդի արտադրանք	399.8	437.4	397.6	434.7	579.4	33.3
Հանքահումքային արտադրանք	720.7	814.1	746.9	937.7	1196.0	27.6
Քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանք	394.7	470.4	417.3	455.9	586.8	28.7
Պլաստմասսա և դրանցից իրեր, կաուչուկ և ռետինե իրեր	200.1	211.8	195.3	234.6	326.7	39.3
Կաշվե հումք, կաշի, մորթի և դրանցից իրեր	24.4	24.2	15.3	24.2	28.4	17.4
Փայտ և փայտյա իրեր	56.5	66.6	53.7	72.3	93.2	28.9
Թուղթ և թղթից իրեր	101.2	96.7	87.2	87.5	137.4	56.9
Մանածագործական իրեր	318.4	301.3	245.2	301.6	396.2	31.4
Կոշկեղեն, գլխարկեղեն, հովանոցներ	57.2	59.1	45.2	59.9	76.6	27.9
